ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմաբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը 2021 թ. լույս է ընծայել ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մերի Կիրակոսյանի «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումները» գրքույկը (գիտ. խմբ.՝ արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյան):

Մ. Կիրակոսյանը օգտվել է մասնավորապես Արվեստի ինստիտուտի արխիվից, որտեղ պահպանվել են տարբեր տարիների գիտական միջոցառումների հրապարակումները, գիտական և արխիվային նյութեր՝ նամակներ, գրություններ, հուշեր:

Արվեստաբանը, անդրադարձ կատարելով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական նստաշրջաններին ու սեմինարներին, մեկտեղել է տարբեր տարիների գիտական միջոցառումներին առնչվող պատմական փաստերն ու ժամանակագրությունը: Նկատենք, որ մինչ այդ նմանատիպ աշխատանք չի իրականացվել:

Հեղինակը կազմել է նաև վերոնշյալ միջոցառումների մասին ակադեմիական ու պարբերական մամուլում տպագրված արձագանքների գիտական լրատուն և այդ միջոցառումների վերաբերյալ նյութերի հրատարակված ժողովածուների մատենագիտությունը՝ ժամանակագրական և այբբենական կարգով:

Մանրամասն ներկայացվում են տարբեր տարիների գիտական նստաշրջանների ընթացքում արծարծված կարևորագույն թեմաները, անդրադարձ է արվում դրանց բացառիկ դերին ու նշանակությանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գործունեության ընթացքում կազմակերպվել են տասնյակ գիտական նստաշրջաններ, սիմպոզիումներ և սեմինարներ: Այդ ամենի սկիզբը դարձավ 1961 թ. Ալավերդի քաղաքում բացված գիտական սեմինարը, որին հաջորդեցին մի շարք նստաշրջաններ, որոնք ընդգրկեցին արվեստի գրեթե բոլոր ճյուղերը՝ կերպարվեստ, երաժշտագիտություն, ճարտարապետություն, դեկորատիվ կիրառական արվեստ, դիզայն, թատերական արվեստ և կինոարվեստ:

Հետագայում Արվեստի ինստիտուտը գիտական միջոցառումներ կազմակերպեց թե՛ Հայաստանում՝ Ալավերդիում, Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), Ղափանում (այժմ՝ Կապան) Նոյեմբերյանում, Երևանում, Արզական գյուղում, և թե՛ նրա սահմաններից դուրս՝ Թբիլիսում, Մոսկվայում, Իտալիայում:

Միջազգային համագործակցության տեսանկյունից Մ. Կիրակոսյանը կարևորել է հայ-իտալական կապերի հաստատումը: Միլանի հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրման կենտրոնի և ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գործակցության կարևոր արդյունքներից էին հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումները (1975, 1977, 1981, 1985, 1988): Դրանք խթանեցին հայագիտական մտքի առաջընթացը, նպաստեցին տարբեր երկրների գիտնականների միջև համագործակցության ամրապնդմանը:

Միջհանրապետական գիտական նստաշրջանների ընթացքում հատուկ կարևորություն ստացան 1970-ական թթ. սկիզբ առած հայ-վրացական գիտական շփումները, Հայաստանի և Վրաստանի արվեստի հիմնահարցերին նվիրված համատեղ գիտական կոնֆերանսները (1979, 1981, 1989):

Կարևոր է նաև անդրադարձը հայ արվեստի մեծանուն ներկայացուցիչների հոբելյաններին նվիրված գիտական միջոցառումներին: Ականավոր հոբելյարներից էին, օրինակ՝ Արամ Խաչատրյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, Կոմիտասը, Տիգրան Չուխաճյանը, Առնո Բաբաջանյանը, Հովհաննես Չեքիջյանը, Սայաթ-Նովան, Մոմիկը, Ռուբեն Դրամբյանը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Հովնաթանյանը, Ժանսեմը, Հովհաննես Այվազովսկին, Վարդգես Սուրենյանցը և այլք:

Մերի Կիրակոսյանը մանրամասն անդրադարձել է նաև Արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհրդի գործունեությանը, որը սկիզբ է առել 2004 թ. Երիտասարդ արվեստաբանների խորհրդի ստեղծմամբ: Այն երիտասարդ արվեստաբանների համար հնարավորություն ընձեռեց մասնակցելու տարբեր գիտական միջոցառումներին: Հարկ է նշել, որ Երիտասարդ արվեստաբանների խորհուրդը Արվեստի ինստիտուտի օգնությամբ կազմակերպել է արդեն 14 գիտական նստաշրջաններ, որոնց մասնակցել են Հայաստանի մի շարք բուհերի և գիտական կենտրոնների երիտասարդ արվեստաբաններ, ինչպես նաև օտարերկրացի մասնագետներ՝ Իրանից, Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ֆրանսիայից: Երիտասարդ արվեստաբանների գիտական նստաշրջաններին հաջորդել են դրանց գիտական նյութերի ժողովածուների հրապարակումները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և այլ գիտակրթական հաստատությունների համագործակցության վերաբերյալ տեղեկատվության մեջ նշվում է, որ Արվեստի ինստիտուտը կազմակերպել է 84 գիտական նստաշրջան:

Մերի Կիրակոսյանի աշխատանքը արժեքավոր է արվեստագիտության ոլորտում պատմափաստագրական տվյալների և նյութերի մեկտեղման առումով:

ՄԱՐՏԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու